

Հիւանդներն են, որ ամենից շատ նպաստում են հիւանդութեան տարածուելուն: Հիւանդութեան սկիզբը յայտնուում է նրանով, որ ժանտախտով բռնուածը ըստ մեծի մասին մի անգամ դողացնում է: Առաջ է գալիս զլխացու, փստումն և փորկապութիւն: ժաժամանակ դորա հետ սկսում են ցուել և ուռել աւշային խուլերը աճուկներում, թեւերի տակ, ծնոսի տակ և վզի վրայ: 3—6 օրից յետոյ ուռած խուլերից մի քանիսը բսկում են ծակուել, նրանց միջից դուրս է գալիս փահր, յետոյ հիւանդը ստափկ քրտնում է և սկըսում է առողջանալ:

Միջակ տեսակի ժամանակ այդ երեւոյթները լինում են աւելի սաստիկ, Հիւանդի աչքերը լցուում են արիւնով, Շատ անգամ տեղի է ունենում ուշագնացութիւն և դառանցանք: Մարմնի տարրութիւնը բարձրանում է: Պաշուի վրայ դուրս են գալիս կարմիր բծեր և պտուկներ, նոյնպէս և կարճատե ուռոյցքներ: Հիւանդը կամ մեռնում է 4—6 օրում, կամ առողջանում է 2—3 շաբաթուայ մէջ:

Ծանր տեսակի ժամանակ հիւանդների վրայ գալիս է սաստիկ տխրութիւն, բայց նորա ուշքները չեն կորցնում մինչև մահը: Հիւանդութիւնը այնքան սաստիկ և կարճատե է լինում, որ ժամանակ չի լինում ուռոյցքներ յառաջանալու: Սկսում է անվերջ փստումը մշտական կապութեան հետ: մէզը բոլորովին դադարում է: յետոյ յառաջ են գալիս արևան լուծման երեւոյթները, արիւնհոսութիւն կաշուից, ստամոքսից, աղիքներից, երկկամուրից և թոքերից: Թոքերից արիւն հոսելը յաճախ տեղի է ունեցել «սև մահ» անունով համաճարակի ժամանակ:

Ժանտախտով հիւանդացողների մահացման տոկոսը շատ մեծ է: Նա հասնում է 90—95% -ի: Կ. Տ. Խ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ:

Նորերումս New Haven-ում յառաջ է եկել աղիքների տիֆի համաճարակ, որիս հիւանդացել են 100 հոգի: Քննութիւնը ցոյց է տուել, որ վարակման միջնորդը եղել է կաթը, որի ամանները լուսացուում էին չնոսրի ջրով: Իսկ լոճորի մօտ հոգի վերայ մի քանի անգամ ածած է եղել տիֆով հիւանդների լուացքի չորը:

Ամերիկայի միացեալ Նահանգների թիշկների թիւը հասնում է 120,000-ի, իսկ քնակիչների թիւն է 75 միլիոն:

Լոնդոնի դքսութեան խորհրդին ներկայացրած, Claybury-ում գտնուող խնկագարների ապաստանարանի վերաբերեալ, հաշուի մէջ դրկտոր Ջոնս շօշափում է այն հարցը, թէ ինչպէս պէտք է որոշել սովորական հարեցողու-

թեան եւ հարեցողութիւնից յառաջացող խնկագարութեան սահմանը: Անգլիական օրէնքը հարեցողներին ազատ է թողնում, իսկ խնկագարներին պատուիրում է գետնից դաշնոցներում: Այս պատճառով անբաժնետ է, որ բժիշկները կարողանան որոշել մէկը միւսից: Քննելով այդ խնդիրը, The Lancet բժշկական թերթի խմբագրութիւնը համաձայնում է դրկտոր Ջոնսի հետ, թէ յիշաւի այդ խնդրի լուծումը շատ դժուար է, եւ պահանջում է որ օրէնքը փոխուի այն մտքով, որ սովորական հարեցողները, որոնք թէեւ զեռ խնկագարուած չեն, այնու ամենայնիւ նոյնպէս գրկուին ազատութիւնից, աչքի առաջ ունենալով այն վնասը, որ նորա հասցնում են իրենց ընտանիքներին եւ հասարակութեանը: Այդպէս ազատութիւնից զրկելը, թերթի կարծիքով, ոչ թէ բռնութիւն կը լինէր, այլ ընդհակառակը ծննդութեալ բարեբարութիւն բոլոր հասարակութեան համար:

1896 թ. առաջին կիսամիակին Գերմանիայի համալսարաններում եղել է 29,747 ուսանող, իսկ 1895 թ. նոյն ջըջանում եղել է 29,107 ուսանող:

Ուսանողները համալսարաններում քաժանուած են եղել հետեւեալ կերպով.

Բեռլին 4649 հոգի: Միւնխեն 5777 հ.: Լէյպցիգ 2876 հ.: Բոնն 1865 հ.: Բրեսլաւ 1425 հ.: Հայլէ 1115 հ.: Փրայսբուրգ 1579 հ.: Վիւրցբուրգ 1284 հ.: Տիւրինգեն 1172 հ.: Հայդելբերգ 1164 հ.: Շլէսնգէն 1158 հ.: Գեոտտինգէն 1007 հ.: Մարբուրգ 965 հ.: Գրայֆսվալդ 948 հ.: Ստրասբուրգ 958 հ.: Ենա 764 հ.: Կիլ 708 հ.: Կեօնիգսբերգ 700 հ.: Գիսսեն 650 հ.: Ռոստոկ 500 հ.: Միւնստեր 448 հ.:

Ըստ ֆակուլտետների այդ թիւը քաժանուում է հետեւեալ կերպով.

Աստուածաբանական (կաթոլիկ) 1782: Աստուածաբանական (բողոքական) 2646: Իրաւաբանական 8075: Բժշկական 7834: Փատմական—լեզուագիտական 5584: Մաթեմատիկական եւ մանկամատիկական 2989:

Կեանքը լուսնի վրայ. — Աստղաբաշխական դիտողութիւնները հետզհետէ համոզում են գիտնականներին, թէ լուսինը չըլապատուած է մթնոլորտով: Նկատուած է, որ լուսնի շուրջ կողմը մասախլապատ է եւ աղբամուղ է երեւում, որ յառաջ է գալիս լոյսի անդրադարձումից գալային մարմնի մէջ: Գրիւնշի դիտարանում վաղուց դիտել են, որ լուսնի յետեւ ծածկուող աստղերը երկու վայրկեաշաշափ անելի երկար են երեւում, քան թէ պէտք է երեւային: Այս եւ նման դիտողութիւնների հիման վրայ հաշուել են նոյն իսկ, որ լուսնի մթնոլորտը 200 անգամ անելի թեթեւ պէտք է լինի երկրի մթնոլորտից:

Պրոֆեսոր Պիկկերինգ ենթադրում է, թէ լուսնի մակերեսից ծածկուած է ջրային շուրջ մասախլապատ: Նա գտնում է նոյնպէս, որ լուսնի մակերեսային վրայ նկատուած օձապտոյտ գծերը, նման մեր քարտէշների վրայ նկարուած գետերին—գետեր են: այդպիսի գետեր նա հաշուել է մինչեւ 55 հատ, զանազան մեծութեան: Այժմ հաստատապէս ընդունուում է, որ լուսնի վրայ կան գետերի հոնքեր, սակայն այնքան նեղ, որ եթէ նրանց մէջ ջուր մտնար է լի լինի, մննք ոչ մի կերպով նկատուել չենք կարող: Նոյն պրոֆեսորն ապացուցանում է, որ լուսնի մակերեսային վրայ լուսակամութիւն պէտք է լինի: Յայտնի է, որ լուսնի վրայ կան ընդարձակ հարթութիւններ: գիտնական Նէյսոնը նկատել է, որ լուսնի լուսնի ժամանակ այդ հարթութիւններից շատերի վրայ երեւում են գողջագողի, համարեա սեւ գծեր եւ շուտով կորչում են: Լուսնի ժամանակ արեգակի ճառագայթները ուղիղ ընկնում են լուսնի տեսանելի երեսի վրայ եւ պայծառ լուսաւորում են նրա բոլոր մասն-

որ, այնպէս որ ստուերի մասին խօսք չի կարող լինել: Պիկ-կերինգը այս լիովութիւնները վերագրում է լուսնի վրայ եղած քուսակաւութեանը: Այս երեւոյթը պատահական չի կարող համարուիլ, որո հետեւ նկատուում է լուսնի հարթութիւնների վրայ, բացի մէկից. իսկ երկուսի վրայ սեւ քծերն այնքան շատ են, որ հասարակ աչքով անգամ կարելի է տեսնել: Նոքա սովորաբար լինում են գորշագոյն, սակայն մէկը զօրեղ հեռադիտակի միոցով երեւացել է բաց դեղ-նագոյն կանաչի վրայ: Պիկկերինգի դիտողութիւնները մեծ արդիւնք են խոստանում. այդ դիտողութիւնները միակը չեն վերջին տարիներս կատարուած հետազոտութիւնները համոզում են, որ անտիդի է կարծել, թէ լուսնի մակերեսային վրայ օրգանական կ'անք գոյութիւն չունի: Թէպէտեւ հրա-բրդիային արտավիժումները, որ յաճախ են տեղի ունենում լուսնի վրայ, շատ աննպաստ են քուսակաւ եւ օրգանական կեանքի համար, բայց եւ այնպէս երկրի արբանսակը մի-անգամայն կեանքից զուրկ չէ համարուում:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն.

1896 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ ՀԱՄԱՐ.

«Էքեալ թողցի դուստր Սիովնի իբրեւ զտաղաւար յայգւոջ, և իբրեւ զհովանի միգա-պահաց ի մէջ սեխենեաց, և իբրեւ զքաղաք պաշարեալ» մարգարէի այս հատու խօսքե-րի մէջ ինչպիսի՞ ճշգրութեամբ պատկերանում է այն արգահատելի վիճակը, որ մեր մայր Սիով-նը, առաքելահաստատ մեր ս. եկեղեցին է ներկայացնում իւր զաւակներով, անցեալ զարհուրելի տարեշրջանից յետոյ: Նորան շրջ-նապատող աղէտները մեծ մասամբ նախընթաց տարուայ հետ էին սկսուած և շարունակուե-ցան. Տաճկաստանի հայ ժողովուրդն արդէն իսկ լողում էր արեան ու արտասուքի ծովի մէջ, երբ ն. Պօլսի և Վանի իրենց ընդարձա-կութեամբ և արհաւիրքներով անցեալը դրեթէ մոռացնել տուող՝ մեծ կոտորածները նոր հե-ղեղներ աւելացրին, բարեւաւութեան և փրկ-կութեան յուսոյ վերջին ամբարտակները խոր-տակուեցան, և թշուառ զոհերի առաւել թը-շուառ որբերն ու ազգակիցները, անտուն ու ա-նօգնական մնացած՝ օտարի գրկում, օտար հողի վերայ սկսան ապաստանարան որոնել. հրա-պարակ ելան բռնի կրօնափոխութեան տխուր արդիւնքները, յառաջ եկաւ գաղթականու-

թեան անտանելի աղէտը: Եկեղեցին յիրաւի որ մնաց մէջտեղ ինչպէս սեխենեաց պահապա-նի մի էքեալ հիւղ, ինչպէս մի պաշարեալ քա-ղաք. և պաշարողները դժբաղդաբար միայն թշնամիներ չեն՝ քրիստոնէական ս. հաւատի թշնամիներ, այլ նա և նորա էքեալ վիճակից օգտուել կամեցող քրիստոնեայ եղբայրներ: Իբրեւ անկեղծ բարեկամ են մօտենում շա-տերը՝ քաղցեալին հաց, մերկին հանդերձ մատակարարում, և քանի դեռ ամէնքը սար-սափի թարմ տալաւորութեան ներքոյ էին, անշուշտ մեծագոյն մասի օգնութիւնը ան-միջական անկեղծ զգացման արտայայտութիւն էր. բայց ահա կարծես այստեղ այնտեղ սկը-սում են արթնութեան նշաններ ցոյց տալ, զգալ և զգալի դարձնել, որ ցանած քարի սերմերից պտուղներ ևս ժողովել կարելի է. մի բան որ այս ժողովուրդը մահուան է դա-տապարտուած՝ դուրկ առաջնորդից, զուրկ մեծ ակնկալութիւններից, խոհեմութիւն չէ միթէ վաղօրօք հոգալ, որքան կարելի է մեծ բաժին հանելու նորանից: Եւ այդ անկեղծ քարեկամները մօտենում, շրջապատում են ամեն կողմից, և քարի խորհուրդներ շնչում եթէ մեզ հետ լինէիք, մեր հաւատակից, մեր դաւանակից՝ մենք կօգնէինք ձեզ, մեր կա-ռավարութիւնը կպաշտպանէր, ու այդպէս խեղճ չէիք մնայ: Մահմեդականը հարուա-ծում է, և քրիստոնեան հրապուրում. իսկ այդ բոլոր յայտնի ու գաղտնի նետերի են-թակայ պաշարեալ քաղաքը. ինչ են մտածում արդեօք, ինչ տրամադրութիւն են ցոյց տա-լի՝ որչափ արթնութիւն, որչափ ոյժ և կո-րով նորա բնակիչները, նորան հսկող պահա-պանները: Երկրաւոր ստացուածքի մասին չէ միայն խօսքը, ամենամեծ, ամենակենսական, ամենանուիրական բանն են խել կամենում նոցանից՝ այն հաւատը, որ տաանեակ և տա-նեակ սերունդների կեանք և ոգևորութիւն է ներշնչել, այն եկեղեցին, որ իբրեւ գորովա-գութ մայր խնամել, կուրծքին կպցրած սնու-ցել և սփռել է նոցա, այնպիսի ժամանակ-ներում, երբ դրսի աշխարհը դժոխք էր մա-հահոտ, երբ այսօրուայ՝ քրիստոնէութեան ու քաղաքակրթութեան անունով, իրենց աւետա-րանական մօքուր դաւանութեամբ խրոխտացող